Արձանագրություն N1

(նիստը կայացել է 2023թ. սեպտեմբերի 15-ին)

Նիստին մասնակցում էին Արմավիրի մարզի «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ծնողական խորհրդի 12 անդամներից 9-ը, բացակա՝ 3-ը: Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանը:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատում:

(զեկ.՝ Գ. Մերգևոսյան)

2. Դպրոցի ծնողական խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն:

(զեկ.՝ Ա.Սահակյան)

3. Դպրոցական դասագրքերի տրամադրման և վարձավճարների հավաքագրման ընթացքի մասին:

(զեկ.՝ Գ.Փարսիլյան)

4. Ծանոթացում 2023-24 ուստարվա տարիֆիկացիային:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

Օրակարգում՝

1. Դպրոցի ԾԽ տարիքով ավագ անդամ Գ. Մերգևոսյանը ներկայացրեց օրակարգը:

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել միաձայն:

Օրակարգում՝

Դպրոցի ծնողական խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն:

(զեկ.՝ Ա.Սահակյան)

2. Լսեցին- Դպրոցի ԴԱԿ Ա.Սահակյանի տեղեկատվությունը ծնողական խորհրդի նախագահի ընտրության կարգի վերաբերյալ:

Ծնողական խորհուրդը, լսելով և քննարկելով ԴԱԿ Ա.Սահակյանի ներկայացրած տեղեկատվությունը,

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայն «Ծնողական խորհուրդների օրինակելի կանոնադրության»՝ անցկացնել փակ քվեարկություն:

2. Հաշվի առնելով հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած տվյալները՝ 9 կողմ, 0 դեմ՝ ԾԽ նախագահ հաստատել Ալիսա Զաքարյանին:

3.ԾԽ քարտուղար հաստատել Անահիտ Մարգարյանին:

Օրակարգում՝

3. Դպրոցական դասագրքերի տրամադրման և վարձավճարների հավաքագրման ընթացքի մասին:

4.Լսեցին-Դպրոցի գրադարանավար Գ.Փարսիլյանի տեղեկատվությունը դպրոցական դասագրքերի տրամադրման և վարձավճարների հավաքագրման ընթացքի մասին: Նա ասաց, որ դասագրքերի տրամադրման գործընթացն սկսվել է օգոստոսի 15-ից: Բացառությամբ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների սովորողների՝ բոլոր աշակերտներն ապահովված են դասագրքերով: Վերոնշյալ դասարանների համար նոր դասագրքեր են հրատարակվում, այդ պատճառով էլ գործընթացը փոքր-ինչ երկարաձգվել է, դասագրքերի մի մասը հաշված օրերի ընթացքում կստանան: 1-4-րդ դասարանների աշակերտներին դասագրքերն անվճար են տրամադրվում: Նա նշեց, որ 2022-23 ուստարվա պետության տրամադրած գեղչն կազմել է 75600 դրամ, որով գեղչվել է սոցիալապես անապահով 35 երեխաների դասագրքերի վարձավճարները:

Լսելով և քննարկելով գրադարանավար Գ.Փարսիլյանի ներկայացրած տեղեկատվությունը՝ ծնողական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ավարտել մինչև 2023թ. նոյեմբերի 1-ը:

2. Աջակցել գրադարանավարին սոցիալապես անապահով երեխաներին գեղչի ցուցակում ներգրավելու հարցում:

Օրակարգում՝

Ծանոթացում 2023-24 ուստարվա տարիֆիկացիային: (զեկ.՝ Ա.Սարուխանյան)

5. Լսեցին-Դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը 2023-24 ուսումնական տարվա տարիֆիկացիայի վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ 2023-24 ուսումնական տարում Մայիսյանի միջնակարգ դպրոցի տվյալները՝

- կազմավորված է 12 դասարան
- սովորում է 214 աշակերտ, նախակրթարանի 13 սան
- աշխատելու են 27 մանկավարժ, 19 ուսուցիչ, 2 վարչական, 12 ուսումնաօժանդակ աշխատող
- ուսումնական առարկաների ընդհանուր ժամաքանակը 1-12-րդ դասարաններում կազմելու է 371 ժամ

Ծնողական խորհուրդը, լսելով և քննարկելով տնօրենի ներկայացրած տվյալները,

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել դպրոցի տնօրենի ներկայացրած տեղեկատվությունը:

Դպրոցի ծնողական խորհրդի նախագահ՝ Ա.Զաքարյան

քարտուղար՝ Ա.Մարգարյան